ԳԼՈՒԽ ՄԿԸ.

Մէջ բոլոր աշխարհին հայոց եթէ 'ի յերեսս դաշտաց և եթէ մէջ քաղաքաց և գեղօրէից սահմանաւ բաժանեսցի ջուրս իւրաքանչիւր երկրի հարկաւորութեան, և դաշնայտրեսցի զի իւրաքանչիւր ոք ստանայցեն առանց աղմկի, և ոչ ոք համարձակեսցի կողոպտել բաժինն դրացուն անկարգութեամբ։

ԳԼՈՒԽ ՄԿԹ.

Ամենայն մարդ պարտ է նշանաւորել նշանաւ իւրով մատակս ձիոց և խաշանց և ամենայն անասնոց, և զամենայն զոր ինչ ոսկի, երծաթ և պղնձէ անօթ, և զամենայն զարդ տանն իւր զի ծանիցէ իւրն և Օտարն։

ԳԼՈՒԽ ՄՀ.

Ամենայն թուղթ պարտուց եթէ անցանիցէ ժամանակ մինչև տասն ամ և միջոց անցելոց ամաց պարտաւոր և պարտատէրն մի՛ յիշեցուցանեն ընդ միմեանց առնելիք և տալիքս միմեանց, մնալով իբր մեռեալ մինչև տասն ամ յետ լրումն տասն ամաց պարտն այն անյիշելի լինի և թուղթն անարժան։

ԳԼՈՒԽ ՄՀԱ.

Ամենայն հակառակութիւն 'ի վերայ ամենայն իրաց որում քաղաքի որ իցէ հարկաւոր է